ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԹԵՄԱ	ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱ	ՄԱՅՐԵՆԻ
ՀԵՂԻՆԱԿ	ՍԵԴԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՄԱՐԶ	ԱՐԱԳԱԾՈՏՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԱՂՋՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն

Գրական ակնարկ

Գործնական համատեքստ

Հետազոտության ընթացք

Տվյալների մշակում և վերլուծություն

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

« Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության և հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների, ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը: »

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Օնլայն և օրումեջ կրթությունից հետո՝ ունեմ դժվարություններ ուղղագրական հմտությունների ձևավորման հետ, քանի որ ուղղագրության ուսուցումը չի իրականացվում որպես առանձին բաժին, սակայն առանց ուղղագրական գիտելիքների ուսուցման և ամրակայման , դրանց՝ հմտությունների վերածման մայրենիի դասը հնարավոր չէ պատկերացնել:

Այս հետազոտության գլխավոր նպատակն է՝

- Ժամանակակից տեխնոլոգրաների միջոցով բարձրացնել գրագետ գրավոր խոսք ունենալու հմտություններ
- Ձևավորել մոտիվացիան
- Բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

21-րդ դարի մարտահրավերներն ընդունելով ժամանակակից դպրոցին անհրաժեշտ է մոտիվացված ուսուցիչ: Այո՛, ուսուցիչն այն մարդն է, ով իր մեջ լույսի մի ամբողջ ծով է կուտակում, որպեսզի իր աշակերտների մեջ մի փոքր կայծ վառի:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուղղագրության ուսուցման տեղը մայրենի լեզվի տարրական դասընթացում և ուսուցման արդյունավետ մեթոդները

Ուղղագրության ուսուցումը երկակի նշանակություն ունի. մի կողմից այն կապվում է լսածը ճիշտ գրի առնելու կանոնների հետևողական կիրառության, իսկ մյուս կողմից՝ գրածը ճիշտ կարդալու, գրական արտասանության կամ ուղղախոսության ընդունված նորմաների ճիշտ պահպանման հետ[1]: Այս առումով էլ ուղղագրության ուսուցումը, հատկապես տարրական դասարաններում, սերտորեն առնչվում է ուղղախոսության ուսուցման հետ և մեծ արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ հետևողականորեն պահպանում են այդ զուգորդումները:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումը, ըստ էության, մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական մշակույթի բարձրացման համար: Հայտնի է, որ ուղղագրական սխալները հաճախ ոչ միայն մթագնում կամ աղավաղում են բառիմաստը, այլև փոխում նախադասության միտքը կամ երկընտրանքի ու կասկածի տեղիք տալիս:

Նման շփոթումներից խուսափելու համար հենց առաջին դասարանից սկսած որոշակի աշխատանք պետք է տանել աշակերտների մեջ անհրաժեշտ ուղղագրական կարողություններ մշակելու ուղղությամբ; Դրա համար երեխաներից ոչ միայն մտավոր լուրջ գործունեություն է պահանջվում, այլև լսողության, տեսողության, խոսելու օրգանների և ձեռքի մկանային համակարգի զարգացման նպատակով տարվող վարժությունների կատարման համեմատաբար ու հետևողական աշխատանք, որովհետև միայն այդ բոլորը համատեղ վերցված կարող են նպաստել բառի գրության մտապահմանը:

Երկրորդ դասարանում աշակերտները զուգահեռ դասընթացին ուսումնասիրում են նաև ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը: Որպեսզի նրանց մոտ ավելի տպավորիչ լինի որոշ բառերի գրությունը, օրինակ՝ ե(յէ) տառի ուղղագրության և ուղղախոսության ուսումնասիրության ընթացքում կարող ենք օգտագործել հետևյալ հնարը: Զբոսանք պատկերասրահում մեթոդի օգնությամբ դասարանում դրվում են մի քանի նկարներ և առարկաներ, որոնց գրության ժամանակ հանդիպում ենք ե(յէ) տառը տարբեր

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

դիրքերում: Այդ առարկաները կարող են լինել. եղնիկ, ելակ, սեղան(խաղալիքներ), տետր, նկարներում նույնպես կլինեն այդպիսի պատկերներ: Աշակերտներից մի քանիսը կշրջեն, կշոշափեն իրերը, կդիտեն նկարները, ապա կասեն անունները և կգրեն դրանք գրատախտակին: Այսպես՝ կկրկնեն բառերի արտասանության և գրության՝ իրենց կողմից ընկալված առանձնահատկությունները.

•բառասկզբում լսվում է յէ, գրվում է ե, բացառություն են կազմում եմ, ես, ենք, եք, են օժանդակ բայերը,

•բառամիջում լսվում է է, գրվում է ե(յէ):

Այս ամենը կատարելուց հետո կստանան առաջադրանք տեքստից դուրս գրել այն բառերում, որոնցում ե-ն լինի բառասկզբում, բառամիջում և բառավերջում[2]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում ուղղագրության ուսուցման առանձին բաժին չկա, սակայն ուղղագրության ուսուցումը կազմում է այդ դասընթացի հիմնական խնդիրներից մեկը, քանի որ առանց ուղղագրության և ուղղախոսության տարրական գիտելիքների դժվար է պատկերացնել կարդալու և գրելու, բանավոր և գրավոր խոսքի ուսուցումը:

Հայերենի ուղղագրության մեջ տարբերակվում են մի քանի բաժիններ[3].

1.<u>Ձայնավորների ուղղագրություն</u>, որի մեջ մտնում են օ(ո), է(ե), ը ձայնավորների ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ո, ե, երկհնչյունը, և եռահնչյուն և երկհնչյուն տառերի ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, ը-ի և և-ի ուղղագրությունը տողադարձի ժամանակ:

2.<u>Երկհնչյունների ուղղագրություն,</u> որի մեջ մտնում են յա, յու, յո, յե, յի և այ, ույ, ոյ, եյ երկհնչյունների, այսինքն՝ յ կիսաձայնի և ա, օ, ու, ի, է

ձայնավորների կապակցությունների ուղղագրությունը:

Տարրական դասարաններում այս ուղղագրությունն առանձին բաժնով չի ուսումնասիրվում, նրա առանձին տարրեր ձուլվում են ձայնավորների ուղղագրության հետ: Ձայնավորների ուղղագրության մեջ է մտնում նաև յ ձայնակապի և նրա գործածության ու տողադարձի հետ կապված ուղղագրական դեպքերի ուսուցումը:

3.<u>Բաղաձայնների ուղղագրություն</u>, որի մեջ մտնում է երկաստիճան և եռաստիճան այն բաղաձայնների ուղղագրությունը, որոնք իրենց տեղերը փոխում են արտասանությամբ

---

[2] Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ»,2010, էջ 7:

[3] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

շատ նման իրենց համապատասխան զույգերի հետ (բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ, ղ- խ, հ)և որոնց ուսուցումը մեծապես կապվում է նաև ուղղախոսության հետ:

4.<u>Քերականական ուղղագրություն</u>, որի մեջ մտնում են խոսքի ձևաբանական և շարահյուսական միավորների ուղղագրական օրինաչափությունները՝ մեծատառը բառասկզբում և նախադասության սկզբում, ուրիշի խոսքի գրությունը, գոյականների հոգնակիի կազմության առանձին դեպքերը, օժանդակ բայի գրությունը և շատ այլ դեպքեր, որոնք քերականական հիմնավորում ունեն:

Քերականական ուղղագրության մեջ է մտնում նաև տողադարձը;

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը, ըստ էության, միաձուլվում է մայրենի լեզվի ամբողջ դասընթացի հետ և ամբողջ ուսումնառության ընթացքում մատուցվում է փոքրիկ բաժիններով, որոնք տրվում են որոշակի ընդմիջումներով, որպեսզի հնարավոր լինի այդ ընթացքում ուսուցված կանոնը լրիվ յուրացնել տալ: Այս առումով ուղղագրության ուսուցումն իսկապես բազմաթիվ թելերով միահյուսվում է լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող մյուս բոլոր աշխատանքների հետ՝ որպես դրանց բաղկացուցիչ մաս:

Ուղղագրության ուսուցման ձևերն ու մեթոդները: Ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը

Մեթոդական գրականության մեջ տարբերակվում են ուղղագրության ուսուցման մի քանի ձևեր, որոնք սկզբունքորեն տարբերվում են միմյանցից[4]:

ա) Ընդօրինակման մեթոդ, որի հիմնադիրը եղել է Լայը, փորձառական մանկավարժության նշանավոր ներկայացուցիչներից մեկը: Ըստ այդ մեթոդի կողմակիցների ուղղագրության ուսուցման համար ամենանպատակահարմար եղանակը միշտ գրված ձևերի կամ բառապատկերների ընդօրինակումն է: Հենց այդ նպատակով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ բացառիկ տեղ էին տալիս
ընդօրինակմանը կամ արտագրություններին:

բ) Հնչյունային մեթոդ, որի կողմնակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին երեխայի հնչյունային լսողության ճիշտ զարգացումը, որովհետև մարդ կյանքում ավելի շատ լսելով է գրում, քան տեսնելով, որը նույնիսկ ինքնուրույն գրելու ժամանակ էլ փաստորեն առկա է որպես ներքին խոսքը ինքնաթելադրությամբ, այսինքն՝ ներքին լսողությամբ գրելու գործողություն: Այդ նկատառումով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ հիմնական տեղը հատկացնում էին թելադրություններին:

գ) Կանոնարկման մեթոդ, որի կողմնակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին ուղղագրական օրինաչափությունների հաստատումը և դրանց համապատասխան կանոնների սերտումը, այլ կերպ ասած՝ գտնում էին, որ այդ գործում մեկ ընդհանրացնող կանոնի յուրացումն ավելի շատ բան կարող է տալ երեխային, քան տասնյակ ու հարյուրավոր առանձին բառերի ընդօրինակումը կամ լեզվական փաստերի մտապահումը:

Այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, ուստի դրանցից որևէ մեկին բացարձակ նախապատվություն տալը կամ որպես համընդհանուր մեթոդ առաջադրելը սխալ կլիներ: Սակայն ուղղագրության առանձին բաժինների ուսուցման համար դրանցից որևէ մեկը կարող է ավելի մեծ նախադրյալներ ունենալ, քան մյուսը, ուստի այդ մեթոդները չպետք է համադրել միմյանց, այլ՝ ընդհակառակն, պետք է կարողանալ դրանք համադրել՝ խելացի կերպով օգտագործելով դրանցից յուրաքանչյուրի առանձին առավելությունները:
է հետագա ամբողջ տարրական ուսուցման ընթացքում:

---

[4] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 519:

https://www.youtube.com/watch?v=Wpgn48ajx-Y

Ինքնագնահատում[Խմբագրել | Խմբագրել կոդը]

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Jump to navigationJump to search

Ինքնագնահատում, իր սեփական արարքների, բարոյական հատկություն ների, համոզմունքների, մոտիվների բարոյական գնահատումը: Ինքնագնահատումը անհատի բարոյական ինքնագիտակցության և խղճի դրսևորումներից մեկն է: Այն մարդու մեջ ձևավորվում է նրա բարոյական դաստիարակության պրոցեսում: Ինքնագնահատման բարոյական ակտի մեջ մարդը դատում է իր գործունեության բարոյական նշանակության մասին ոչ թե պարզապես իր անունից, այլ հասարակության անունից, որին նա պատկանում է և որի մեջ սուբյեկտիվորեն նա իրեն դնում է: Ինքնագնահատման ընդունակության շնորհիվ մարդը հնարավորություն է ձեռք բերում դաստիարակելու իրեն: Ինքնագնահատումը, արտահայտելով անհատի ինքն իր՝ որպես հասարակության անդամի հանդեպ գիտակից վերաբերմունքը, կապված է հասարակական հարաբերությունների և բարոյական դաստիարակության ամբողջ համակարգի հետ[1]:

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4

Ձևավորող գնահատման գործիքներ (փոխադարձ գնահատում)

ՓՈԽԱԴԱՐՁ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Փոխադարձ գնահատումը ձևավորող գնահատման գործիքներից է և կարող է իրականացվել հետևյալ տարբերակներով.

- ✓ սովորողը՝ սովորողին,
- ✓ խումբը՝ խմբին,
- ✓ սովորողը՝ խմբին,
- ✓ խումբը՝ սովորողին:

Փոխադարձգնահատմանմիջոցովսովորողները տեղեկանում ենիրենց աշխատանքի ուժեղ և թ ույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադր անքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ և պարզի հետևյալ հարցերը.



Փոխադարձգնահատումըայլմիջոցների հետ մեկտեղ նպաստում է կրթության որակի բարելավմանը և պահանջում է անձնական պատասխանատվություն, անդրադարձ սեփական ուսումնառությանը, կատարած դիտարկումների հիմնավորվածություն և արդյունքում՝ ինքնագնահատում:

Փոխադարձգնահատումիրականացնելիսպետքէապահովվիհամապատասխան միջավայր, իսկ սովորողների մեջ ձևավորի համապատասխան որակներ և վերաբերմունք: Փոխադարձ գնահատում կարելի է իրականացնել քարտային աշխատանքով, առանձին առաջադրանքներով, ստուգաթերթերով և այլն:

Փոխադարձ գնահատման համար անհրաժեշտ միջավայր և որակներ



Փոխադարձգնահատումկազմակերպելուցառաջուսուցիչըպետքէընտրիառաջադրանքըևտրամադրիայդառաջադրանքիգնահատմանսանդղակը՝չափանիշներով: Շատավելի նպատակահարմար կլինի, եթե չափանիշները մշակվեն սովորողների հետ միասին:

Փոխադարձ գնահատման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ քայլաշարով

Կազմեցին Լուսինե Ալեքսանյանը, Կարինե Պողոսյանը, Աստղիկ Բալայանը

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_91.html

ԹԵՄԱ 10.3.1 - Սովորողների ուսումնառության որակի քանակական գնահատում Quizizz կամ Fyrebox գործիքի միջոցով

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում:
Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևելու են և պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս,համակարգիչ,պլանշետ)օգնությամբ:
Հարցման ավարտին հնարավոր է MS Exel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային

գնահատականները:
Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը և՛ ճշտությունը:
Վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով:
Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz *առցանց գործիքը հնարավորություն է տալիս հետևյալ իրականացնել աշխատանքները.*

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց
- հետևել սովորողների առաջադիմությանն առցանց
- տարածել պատրաստի վարժությունները հղմամբ
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=36371

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտությունս իրականացրել եմ Արագածոտնի մարզի Աղձքի միջնակարգ դպրոցի IV դասարանում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դասի թեման՝ Մայրենի գրավոր

Դասի նպատակները՝

Կիմանան բարդ կամ ածանցավոր բառերում ձայնավորներով սկսվող արմատների ճիշտ գրությունը

Կկարողանան բառիմաստի ընկալման և բառապաշարի հարստացման նպատակով՝ բառակազմական գիտելիքներն օգտագործելու կարողությունները

Դասի ընթացքը՝ **Խթանման փուլ**

Զույգերով աշխատանք՝ կիրառել << Սովորի՛ր – սովորեցրու>> հնարը:

Արտագրի՛ր բառերը և կատարի՛ր ստուգում:

մեղմորեն , նորաձագ, քնքշորեն, ոսկեզօծ, սևորակ, նրբորեն

_____

_____

_____

_____

_____

Արտագրի՛ր բառերը և կատարի՛ր ստուգում:

անօրինակ, միօրինակ, ընդօրինակեցին, օրհնեցին, տարօրինակ, երբևէ

_____

Խմբային աշխատանք՝

Լրացնել բաց թողած տառերը:

մեղմ . րեն, նորածա . , քնքշ . րեն, . սկեզ . ծ, ս . . րակ, նրբ . րեն, ան . րինակ, մի . րինակ, ընդ . րինակեցին, օր . նեցին, տար . րինակ, երբ . .

Խաղ ՝ << Քուիզիզ>>
https://quizizz.com/admin/quiz/619a886185bb87001eb2295e/%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB

Կշռադատման փուլ՝ Թելադրություն ՝ առաջադրանքով

Գարնան երգը

Երկնքից մեղմորեն ժպտաց նորածագ արեգակը: Նա քնքշորեն ոսկեզօծեց սար ու ձոր, արթնացրեց ծաղիկներին: Կակաչը բացեց **սևորակ** աչիկները, նրբորեն նազեց մանուշակը, անօրինակ հրճվանքով ձնծաղիկը ճեղքեց ձյունը, լսվեց թռչունների վաղորդյան ճռվողյունը: Ձմռան միօրինակ ամիսներից հետո թռչուններն վաղորդյան համերգով օրհնեցին **արևին**: Բոլորին տարօրինակ էր թվում , որ **երբևէ** ցուրտ ու սառնամանիք է եղել:

1. Տեքստից դուրս գրիր երկու ածանցավոր բառ: Այդ բառերը բաժանի՛ր բաղադրիչների:

_____

2. Տեքստից դուրս գրիր տրված բառերի հոմանիշները:

դայլայլ_____

առավոտյան_____

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ուժեղ կողմերը

Դասի թույլ կողմերը

Աշակերտներս մոտիվացված էին

Ժամանակի մեջ չտեղավորվեցի

Կատարեցի ինքնագնահատում

Փոխադարձ գնահատում

Դասի թեման՝ Մայրենի գրավոր

Դասի նպատակները՝

Կիմանան բարդ կամ ածանցավոր բառերում ձայնավորներով սկսվող արմատների ճիշտ գրությունը

Կկարողանան բառիմաստի ընկալման և բառապաշարի հարստացման նպատակով՝ բառակազմական գիտելիքներն օգտագործելու կարողությունները

Դասի ընթացքը՝ **Խթանման փուլ**

Զույգերով աշխատանք՝ կիրառել << Սովորի՛ր – սովորեցրու>> հնարը:

Արտագրի՛ր բառերը և կատարի՛ր ստուգում:

հնօրյա, օրեցօր, ոսկեզօծ, մեղմորեն, յուրօրինակ

_____

_____

_____

_____

_____

Արտագրի՛ր բառերը և կատարի՛ր ստուգում:

անդորր, բացօթյա, տերև, օդապարիկ, տերևաթափ_____

_____

_____

_____

_____

Խմբային աշխատանք՝

Լրացնել բաց թողած տառերը:

հն . րյա, . րեց . ր, . սկեզ . ծ, մեղմ . րեն, յուր . րինակ, անդո . . , բաց . թ յա, տեր . ,. դապարիկ, տեր . աթափ

https://quizizz.com/admin/quiz/619bbfcfbd8864001d311ae6/1yjwgtwy1blvodwj1odvunac1anvtdw41olvtg

Կշռադատման փուլ՝ Թելադրություն՝ առաջադրանքով

Աշնանանային տերևաթափ

Հնօրյա անտառը օրեցօր փոխում էր գույները: Արևի ոսկեզօծ ճաճանչներից բոցավառվում էին ծառերի չորացած տերևները: Դեղնակարմիր անտառը մեղմորեն նազում էր ու օրորվում զեփյուռից: Անտառը հիշեցնում էր յուրօրինակ գույների տոնավաճառ:

Սակայն անտառի անդորրը խախտվեց: Հողմակոծ քամին բացօթյա դաշտերից ներխուժեց անտառ: Քամուց գունագեղ տերևները օդապարիկի պես իջան: Սկսվեց աշնանային տերևաթափը:

1. Տեքստից դու՛րս գրիր երկու բարդ բառ, որոնց երկրորդ բաղադրիչը սկսվում է օ-ով:

---

2. Տեքստից դու՛րս գրիր տրված բառերի հոմանիշները:

անդորր ———————————————————————————————

գունեղ ———————————————————————————————

https://learningapps.org/17506490

ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2





Մոտիվացված աշակերտներ

Արդյունավետ, համագործակցային աշխատանքՇաաատ



Դասարան IV[գ]

Առարկան Մայրենի /Գրավոր/

Թեմա/Վերնագիր Բացատրական թելադրություն / Հայաստան

Տեսակը Համագործակցային

Նպատակը Զարգանել կարդալու որակական հատկանիշները, բանավոր խոսքը, ձևավորվել հաղորդակցական և համագործակցային կարողություններ, զարգացնել ստեղծագործական կարողություններ, ձևավորել սեր դեպի

հայրենիքը և ազգային արժեքները: Ամրապնդել քերականական գիտելիքները, կրկնել խոսքի մասերի մասին ունեցած գիտելիքները

Խնդիրները Կզարգանա բանավոր խոսքը, կամրապնդվեն խոսքի մասերին /գոյական, բայ, ածական/ վերաբերող գիտելիքները: Կսովորեն ուղղագրական արժեք ներկայացնող բառերի գրությունը /բնություն, ստեղծել, բարձրաբերձ, հուշարձաններ, անտառամերձ, խորհրդավոր, քարայր/: Կազմությամբ բարդ և ածանցավոր բառերը կբաժանեն բաղադրիչների

Չափորոշիչներ ***1-ին մակարդակ .*** **Իմանալ՝** հնչյունները և տառերը, բառերի որոշակի քանակի բացատրությունը, հիմնական բաղադրիչները՝ արմատ, ածանց, խոսքի մասերը՝ գոյականը, բայը, կետադրական նշանները՝ վերջակետ, ստորակետ: Հասկանալ կարդացածի բովանդակությունը: Մասնակցել խմբի գործունեությանը՝ պահպանելով կանոնները, լսել և կարևորել խմբի անդամների կարծիքը

2-րդ մակարդակ . **Իմանալ՝** բառերի որոշակի քանակի ուղղագրությունը, տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր: Խմբում հանդես բերել տարբեր դերեր ստանձնելու կարողություններ: Ընդունել խմբի բազմակարծությունը

3-րդ մակարդակ. **Իմանալ՝** բառերի ուղղագրությունը, տողադարձը, ածանցավոր բառերը, կետադրական նշանների հիմնական կիրառությունը: **Կարողանալ՝** տրված խոսքի մասերով բառակապակցություններ կազմել: Տարբերել առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը: Խմբի անդամներին բացատրել առաջադրանքը, լուծումը: Ստուգել և ամբողջացնել աշխատանքը

Դասի կահավորումը Թելադրության տեքստ /մեծադիր՝ խմբային աշխատանքի համար/, տեսանյութ՝ երգ §Հայաստան!, եռագույն թերթիկներ՝ /զուգերով և խմբային աշխատանքի համար/

Մեթոդները Մնջախաղ, Թիմային հետազոտություն

Դասի ընթացքը՝

Խ Թ Ա Ն Մ Ա Ն Փ ՈՒ Լ

Դասը սկսել մնջախաղով / Մի քանի աշակերտ ստանում են թղթեր, որոնց վրա գրված են բառեր: Պահանջվում է մնջախաղով այնպես ներկայացնել, որ ընկերները կարողանան գուշակել բառը և տեղադրել պաստառի համապատասխան տողերում/ :

ԳՈՅԱԿԱՆ	Գրիչ	գրատախտակ
ԲԱՅ	Վազել	պարել
ԱԾԱԿԱՆ	Ժպտերես	շատակեր

ԳՈՅԱԿԱՆ	ԲԱՅ	ԱԾԱԿԱՆ
Ինչ եմ, ով եմ	Ես մի բառ եմ, երեք տառ եմ	Թե ուզում ես իմանալ
Հող եմ, ծով եմ	Ինձ ասում են, որ ես բայ եմ:	Ինչպիսին է առարկան,
Մարդ, կենդանի,	Ցույց եմ տալիս գործողություն,	Ինչ հատկանիշ ունի նա,
Այն ամենն եմ,	Եվ ամեն ինչ գործի գցում:	Քեզ օգնության միշտ կգա
Ինչ կա, չկա,		Ածականը աննման:
Ուրիշ խոսքով՝		
Ցույց են տալիս		
Ես առարկա:		

Զ ու յ գ ե ր ո վ ա շ խ ա տ ա ն ք

Երգ «Հայաստան»

-Երգից դու՛ս գրել գոյականներ, բայեր, ածականներ /Աշխատանք զույգերով. Յուրաքանչյուր զույգ գրելուց հետո փոխանցում է հետևի զույգին, մինչև շարքի ավարտը /:

-Դուրս բերված բառերով կազմել բառակապակցություններ, օգտագործել նախադասությունների մեջ:

Ի Մ Ա Ս Տ Ի Ը Ն Կ Ա Լ Մ Ա Ն Փ Ո Ւ Լ

Խ մ բ ա յ ի ն ա շ խ ա տ ա ն ք / 6 խումբ-6աշակերտ /

Խմբում անդամների դերը՝ 2ընթերցող, 1գրառող, քարտուղար, խոսնակ, ուսուցիչ

1. **Թելադրվող նյութի լուռ ընթերցում :**
2. **Բարձրաձայն ընթերցանություն:** **21**
3. **Նյութի բովանդակության մեկնաբանում**:

/1-ին և 3-րդ խմբեր/

-Դուրս գրել բարդ բառերը, բաժանել բաղադրիչների:

/2-րդ և 6-րդ խմբեր/

-Դուրս գրել ածանցավոր բառերը, բաժանել բաղադրիչների:

/ 4-րդ և 5-րդ խմբեր/

-Դուրս գրել ածականները, որոշել կազմությունը:

Նույն առաջադրանքներով խմբերի /ուսուցիչ/ անդամների տեղափոխությամբ ստուգել առաջադրանքները, լրացնել բացթողումները/:

https://learningapps.org/myapps.php

4. **Նյութի թելադրում ուսուցչի կողմից և գրառում:**

Հայաստանում շատ են բնության ստեղծած հրաշալիքները՝ բարձրաբերձ լեռները, խոր ձորերն ոփրփրոտ գետերը: Այսպիսի բնական հուշարձաններ կարելի է տեսնել ամեն քայլափոխի: Բնության ր հուշարձաններ են նաև հին ժամանակներից մեզ հասած անտառամերձ պուրակներն ու խորհրդավոր քարայրները:

Կ Շ Ռ Ա Դ Ա Տ Մ Ա Ն Փ ՈՒ Լ

5. **Ինքնաստուգում**:

Առաջադրանքների ինքնուրույն կատարում /2 տարբերակ/

ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

ԴԱՍԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԳԵՐԱԿՏԻՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ, համագործակցային աշխատանքի շնորհիվ ձևավորվեց իմ մոտ հետազոտական հմտություններ՝ տիկին Թամրազովայի համբերատար աշխատանքի շնորհիվ: Կարճ ժամանակում այս հետազոտությունը միանշանակ չի , երկարատև աշխատանքի շնորհիվ կլինի ավելի արդյունավետ աշխատանք: Ուսուցչի աշխատանքը ի վերուստ տրված առաքելություն է , ուստի ամենօրյա համբերատար , հետևողական , նվիրյալ աշխատանքի շնորհիվ կարող ենք կերտել մեր երեխաների ապագան: Այո, ամենակարևոր երևույթը դպրոցում ամենուսուցանվող առարկան, ամենալավ կենդանի օրինակը՝ ամբողջանում է ուսուցչի մեջ: Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է, երբ գովում են իր աշակերտին: Այն ուսուցիչը , ով կարողանում է իր սաներին օժտել աշխատանքի մեջ ուրախություն գտնելու ընդունակությամբ, արժանի է դափնեպսակի: Աշակերտին սովորեցնել աշխատել, նրան ստիպել սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցնել նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

ԱՅՈ, ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ Ի ՎԵՐՈՒՍՏ ՏՐՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է: ԱՍՏԾՈ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ և ԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԿԵՐՏԵԼ ՄԵՐ ՍԱՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ: ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՆՉԱՓ ԻՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ:

Սիրով՝ Սեդա Մխիթարյան

Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և իր աշխատանքը, և իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:

ԼևՏոլստոյ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:
[1] Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ»,2010, էջ 7:
[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 519:

https://www.youtube.com/watch?v=Wpgn48ajx-Y

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D6%84%D5%B6%D5%A1%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4

---

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_91.html

https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=36371

https://quizizz.com/admin/quiz/619a886185bb87001eb2295e/%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB

https://quizizz.com/admin/quiz/619bbfcfbd8864001d311ae6/1yjwgtwy1blvodwj1odvunac1anvtdw41olvtg

https://learningapps.org/1750649

https://learningapps.org/myapps.php